

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության պետ (ծածկագիր՝ 65-27.3-Ղ3-1)

Հիմնական գործառույթները՝

1. Կոմիտեի կողմից իրականացվող շինարարական ծրագրերի շրջանակներում ղեկավարում և համակարգում է նախագծային և շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ելակետային նյութերի հավաքագրման, մշակման աշխատանքները:
2. Համակարգում է շինմոնիտինգային աշխատանքների կատարման բոլոր փուլերում որակի տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների մատուցման գործընթացները:
3. Ծրագրերի ընթացքի մոնիտորինգի արդյունքներով, ըստ անհրաժեշտության, քաղաքականության միջոցառումների իրականացման համար, Կոմիտեի նախագահին և Գլխավոր քարտուղարին ներկայացնում է անհրաժեշտ հիմնավորումներ և առաջարկներ:
4. Ղեկավարում, համակարգում և կազմակերպում է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի մրցույթային գործընթացը, բնակարանների բաշխման և շահառուների հետ պայմանագրերի կնքման գործառույթները:
5. Մշակում է թիրախային խմբերի համար բնակարանային ծրագրեր:
6. Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ առաջարկներ է ներկայացնում վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի մշակման, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման վերաբերյալ:
7. Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն, գլխավոր քարտուղարի հաստատման է ներկայացնում ստորաբաժանման աշխատանքային ծրագրերը, դիմում-բողոքների գրավոր պարզաբանումների համար հրավիրում է խորհրդակցություններ, տալիս է համապատասխան հանձնարարականներ, այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի շինարարության և ճարտարապետություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ,
- ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

• **Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:**

- Աշխատավարձի չափը՝ **310 858 (երեք հարյուր տաս հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ:**
- Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Կոմիտեի գլխավոր քարտուղարի անունով (դիմումի ձևը կցվում է),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3X4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 29 .07.2019թ.:

ՀՀ քաղաքացիներին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով a.grigoryan@minurban.am հասցեով: Փաստաթղթերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը: Հարցերի դեպքում քաղաքացիները կարող են զանգահարել 011 621 735, 011 621 768 հեռախոսահամարներով:

-----ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

դիմողի հասցեն

դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից
հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով
նշանակել ինձ **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի**
.....
.....
..... **(ծածկագիր՝)**
ժամանակավոր թափուր պաշտոնում.

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն _____
(ունեմ, չունեմ)
2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)
3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ _____
(ճանաչված եմ, ճանաչված չեմ)
4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված
հիվանդություններից որևէ մեկով _____
(տառապում եմ, չեմ տառապում)
5. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական
կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ _____
(գտնվում եմ, չեմ գտնվում)

**Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր
պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով
պատասխանատվության ենթարկվելու մասին:**

Դիմող՝ _____
ստորագրություն
_____ անուն, ազգանուն